

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Մ ՈՒ Ժ Ա Մ Բ Ա Ր Ի Ա Ղ Է Տ Ը



ԳԵՐԱՄԵԾՈՐ ՀԱՐՔ ԵՒ ՅԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ

Պարսկաստանի և Հնդկաստանի թեմը մեր եկեղեցւոյ թեմերի մէջ ամենից ընդարձակն է: Մէկ ծայրը էջմիածնից ոչ շատ հեռու էնդէլի նաւահանգիստ է, իսկ միւս ծայրը Չապոնի Եօկոհաման է կամ Չինաստանի Hong-Kong կղզին: Եթէ ի բաց թողնենք Ատրպատականը, բոլոր Պարսկաստանի, Հնդկաստանի և Չաւայի նշանաւոր գաղութները այս թեմին են պատկանում: Իսպահանի շուրջը, Չարզան գաւառում և Արաղ երեք մեծ կենդրոնում մերձ 50 մեծ հայ գիւղերը ևս այս թեմին են պատկանում: Հայ թեմերի մէջ ամենից առաջինը նա է, որի պատգամաւորութեան պատիւը ինձ է վերաբերում:

Իսկ քաղաքական տեսակէտից այս թէ իւրեանց արդի հարստութեանը և թէ իւրեանց բարձր օահմանադրական ազատութեամբ Հնդկաստանի և Չաւայի հոյերը մեր բոլոր գաղութներից գուցէ ամենաբարձր գիւրջին են հասել: Այս երկու ընդարձակ երկիրներում հայերը կառավարական պաշտօնեաների մէջ, որպէս քաղաքագէտներ, գիււանագէտներ, կրօնագէտներ, բժիշկներ, ինժիներ, Անգլիացւոց, և Հոլանդացւոց գէմ են մրցում և որպէս վաճառական նրանցից գերազանցում են:

Այս թեմն ես անձամբ ուսումնասիրած եմ: Բնիկ Նոր-Չուղացի լինելով ի հարկէ ամենից լաւ թեմի կենդրոնը գիտեմ և նրա գաղութները, թէ Պարսկաստանում, թէ Հնդկաստանում, ի մօտոյ տեսել եմ: Թեմիս հայ դաւակների սխրալի գործունէութիւնը անցեալ 300 տարիների պատմութեան մէջ թէ Պարսկաստանում թէ Հնդկաստանում

նում, Զաւայում և նոյն իսկ ճապոնիայում նշանաւոր տեղ է բռնում:

Հնդկաստանում՝ Ասիական ժողովուրդների մէջ և նոյն իսկ ճապոնիայում հայն միակ ազգն է, որ բոլոր այն քաղաքական արտենութիւնները, որ Անգլիացիք ունեն լիովին վայելում են: Սա հետեանքէ այն քաջութեան, որ հայն թէ անցեալում, թէ ներկայում ցոյց է տուել թէ խաղաղ ժամանակում և թէ կռուի ժամանակ:

Յայտնի է պատմութեան մէջ թէ Անգլիացւոց դէմ ամենաքաջ մարտիկների մէջ Գորգի-Խան Զուղայեցին էր, որ քանի տարիներ ընդդիմացաւ անգլիական թէ ղէնքին, թէ գիւանական խաղերին:

Նայեցէք բոլոր Եւրոպական գրականութիւնը, Իտալական, Անգլիական, Ֆրանսիական, Գերմանական մինչև վերջին 60 տարին և դուք կտեսնէք, որ երբ մի նշանաւոր Եւրոպացի հեղինակ հայի հետ շփում է ունեցել և հայի մասին խօսք ունէ նպատաւոր կամ աննպատ, այդ հայերը գրեթէ միշտ իմ թեմին են պատկանում. Զուղայեցի և կամ Զուղայեցւոց սերունդից են. երբ դպրոց ենք ունեցել Ռափայէլ Մուրատեան, Լաղարեան և թէ Նոր-Նախիջևանի զանազան ազգային հաստատութիւններ գրամներ մերգաղութի անդամներն են վճարել:

Բոլոր հին եւրոպական հայ մամուլը Հօլանդիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Զուղայեցի վաճառականներ են շինել և պահպանել: Նոյն իսկ այս սուրբ Մայր Աթոռի հին տպագրական ծախսերը մինչև 19-րդ դարը մենք ենք ուղարկել, Սուրաթից, Բոմբայից, Կալկաթայից: Վկայի թէ պէտք ունէք նայեցէք Էջմիածնի հին դրքերի յիշատակարանների մէջ:

Եւ մեր Զաւայաբնակ Զուղայեցի Յովսէփ Ամիրխանեանը որպէս գիտէք պատրաստ էր բոլոր . . . Ղարաբաղ և Ղարաբաղ դաւառները իր արգար ստակով գնել հայերին նուիրելու նպատակաւ, թէ գիւանագիտական գլխաւոր դժուարութիւնները նրա հաշիւները շխանգարէին: Երբ դեռ Մայր Հայաստանում, Տաճկաստանում երազի մէջ

ևս չէին երևակայէր ազատութեան և սահմանադրութեան գաղափարի նշոյլը՝ մեր Պարսկաստանի Հաֆէզի և Շէյխ Սադի քաղաքացի Շմաւն քահանայն ազատութիւն էր քարոզում լրագրութեան միջոցաւ: Մադրաս քաղաքում և միևնոյն տար Զերմեռանդութեանն ստիպող հրատապ քաղաքից «Որոգայթ փառաց» և «Յորդորակ գրքերի միջոցաւ Մատրասքնակ Զուղայեցիին դեռ ևս նախագահ Վալինգտոնի ուղեղից դորս չեկած սահմանադրական կառավարութեան հրահանգների մանրամասն formule-ները արձանագրում էր Հայաստանի հանրապետութեան համար: Միևնոյն քաղաք Զուղայեցւոց միջոցաւ ևս առաջին անգամ բոլոր եւրոպական գիտնական աշխարհի Խորէնացու պատմութեան հետ ծանօթացաւ յոյն և լատին տպագրութեան՝ հայր Զամչեանից առաջ: Անցէք եւրոպայի քաղաքները յատկապէս հին քաղաքները, Ռօմ, Վենետիկ, Տրիեստ, Ամստերտամ և ին. և ամեն տեղ տպարան, եկեղեցի, դպրոցնոյն իսկ լոկ անունների շարք Ս. Մարկոսի եկեղեցւոյ մարմարիոյ սիւների վրայ խօսուն վկայ են մեր անզսպելի գործունէութեան: Նոյն իսկ մեզ յատուկ աշխարհաբառ լեզուն՝ մեր բնակարանի պատուհաններն ևս վկայում են թէ հին քանի դարերք են անցնում, որ մենք ի մօտոյ յարարութեան մէջ եմք Իտալացոց, Հոլանդացոց, Փռանսացոց և Անգլիացոց հետ: Այսքան համառօտ ակնարկ էր մեր անցեալի վրայ. այժմ ևս Հնդկաստանում, Զովայում, Անգլիայում, Հօլանդայում ամենաբարձր քաղաքակրթիչ տիպերի մէջ՝ մեր թեմի անդամներ յայտնի դիրք ունին. չմոռանանք ևս Զուղայեցի պրօֆեսսոր Էմինը և Քանանկանը:

Ասիական գրականութեան մէջ պարսկերէնը անզուգական է թէ իր փառաւոր անցեալով, և թէ իւր ոյժդնութեամբ, և այս գրականութեան մէջ ևս Զուղայեցի Գագալի թոռը Յակոբ խանի որդին հանգուցեալ Միրզա խանը չափազանց մեծ դիրք ստացաւ: Նոյն իսկ ամենալուրջ մուսուլման պարսիկ գրագէտները խոստովանում են որ բոլոր մահմեդականները 14 դարի մէջ Միրզա

Մեղքոն Խանի նման հանճարաւոր, ճոխ և ազգու գրիչ
 ատեսած չէ։ Այժմեան Եւրոպական գրականութեան մէջ ա-
 մենից առաջին դիրքը խտալականն է բռնում ի հարկէ,
 ոչ միայն տպագրութեան թիւը և քանակը հաշուելով, այլ
 նրա որակը և գերազանցութիւնը, այս միայն իմ առանձ-
 նական կարծիքը չէ, լուրջ գրագիտութեան վճիռը է և մեզ,
 բարեյիշատակ Կլադստոն, որ Եւրոպական հին և նոր գրա-
 կանութեան ամէնը մանրամասն ատեսք էր, այս գաղափարի
 պաշտպան էր և այս առաջին Եւրոպական գրականութեան
 մէջ առաջին թիւերի մէջ՝ թէ ոչ նոյն իսկ առաջինը Ջու-
 ղայեցուց սիրեալ Աղանուր տիկինը է, որոյ ազգակիցները
 թէ Ջուղայում, թէ Ջաւայում, թէ Եւրոպական քաղաք-
 ներում յայտնի են հայ գաղութների մէջ։

Բայց ըստիս հետաքրքրիչ կէտը, որոյ վրայ յարգելի
 պատգամաւորներն ուշադրութիւնները գրաւել կուզէին
 սա է որ տպագրուածը այս Մայր Աթոռի ներկայացուցչի
 միջոցաւ մեր թեմից կարելի է շատ աւելի օգտուել
 ընդհանուր ազգի շահերը հիմնելով լուրջ բարձր գիտու-
 թեան հիմանց վրայ։

Ինչ մեր հայերի մէջ նկատելի կերպով բացակայ է
 եղեր մինչ այսօր, բարձր, հիմնաւոր բազմակողմանի՝ մար-
 սեալ գիտութիւն է, այնպիսի մէկ գիտութիւն, որ քսան
 երեսուն և աւելի տարիքներ աշխատութեամբ Անգլիական,
 Ռուսական և Ամերիկական համալսարաններում միայն
 կարելի է ձեռք բերել։

Ես այս ազատ սահմանադրական երկիրներն եմ միայն
 յիշում, քանզի համոզուած եմ միայն լսկ թէօրիական գի-
 տութիւնը չէ, որ մեր ազգի դիրքը կարող է բարւոքել,
 ազատ երկիրների միջնորդը գլխովին ուրիշ գոյն է տա-
 լիս մեր մտածելու ձևին, կենաց էական հարցերի վերա-
 բերմամբ։

Մենք պէտք ունենք մէկ ազգային կազմակերպու-
 թեան բաւական գրամագլխով, որոյ նպատակը լինի պա-
 հել ազատ սահմանադրական Եւրոպայի համալսարան-
 ներում բարձր կրթութեան համար առ պակասը տարինը

հարիւր հայ ուսանող՝ ոչ միայն մի քանի որոշեալ տարի, այլ առ պակասը 10 տարի և մենք պիտի լուծենք Եւրոպական գիտութեամբ և փորձով շատ հարցեր սահմանադրական ազատական ինքնաւարտութեան վերաբերմամբ:

Եւ ազգային պատմութեանը լիզուի և գրականութեան ուսումնասիրութեան հիմունքը մինչև այսօր չունենք մենք: Քանզի մեր մէջ սանսկրիտ, փահլիէն և ուրիշ լեզուներ և գրականութիւն գեռ ևս լուրջ ուսումնասիրող չկայ: Եթէ ինձ յաջողուի սորանով ձեր ուշադրութիւնը և մեր նոր ընտրուող կաթողիկոսի ուշադրութիւնը գրաւել և ձեր միջոցաւ և ազգային լրագրութեանց ներկայացուցիչների միջոցաւ մեր ընդհանուր հայութեան ուշադրութիւնը հրաւիրել այս ճշմարտութեան վրայ թէ՛ որպէս ազգ մեր ապագայ ճակատագիրը կապուած է բարձր ազատ երկիրների համալսարանական կրթութիւնը ձեռք բերելու հետ և այն էլ երկար տարիներ անխոնջ աշխատութեամբ և ուսումնասիրութեամբ, շէշտում եմ թէ ինձ յաջողուի այս կէտը ձեզ մօտ մարմնացնել, ես ոչ ձեր ժամանակն եմ վատնելու, և ոչ իմ երկար ճանապարհորդութիւնը ի զուր է եղել: Կասկածելի է ի հարկէ ինչու ես Պարսկաստանից և իր հրատապ այժմութեամբ հեռու եմ մնացել. բայց ես աւելի Հնդկաստանից եմ խօսել վասն զինախ և յառաջ աւելի վառվռուն տարիներ այս երկիրներումը ուսումնասիրութեամբ եմ պարապել, և երկրորդ վասն զի գիտեմ մեր ամեն նշանաւոր գործերը այս երկիրներում է կատարուել և մեր ապագան որպէս ազգ աւելի կախում ունի այդ գործերից, որ մենք կարող ենք յառաջ տանել միջին Ասիայում Եւրոպական գիտութեան լսատէրների միջոցաւ: Խաղաղ ազգային յառաջադիմութեան ճանապարհը միշտ պիտի հարթուի բարձր ուսման գիտութեամբ, և այդ լոյսը մենք պիտի ձեռք բերենք Եւրոպական համալսարաններում:

Իսկոստ Բագիլ.

